ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **20/06/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Հայկ Ավագյանը, Թարո Ավետյանը, Արտավազդ Խաչատրյանը, Սոնա Կարապետյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 20-ի թվով 7-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականության հողամասերը աճուրդային եղանակով օտարելու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
3.Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող 0.14717 հա մակերեսով պետական սեփականության հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
4.Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող հողատեսքերը համայնքային սեփականություն

ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
5.Վայք համայնքի 2023 թվականի բյուջեի ծրագրային և ծախսերի տնտեսագիտական հոդվածների միջև վերաբաշխում կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
6. Վայք համայնքի 2023 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխություններ կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
7. Վայք համայնքի Վայք քաղաքի ավտոկայանի հարակից տարածքում գտնվող ընկուզենին հատելուն թույլտվություն տալու մասին/զեկուցող՝ Գ.Գևորգյան/:
8. Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
9. Վայք համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ին ընդունված թիվ 41-Ա և 42-Ա որոշումներում փոփոխություն կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
10.Վայք համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ

ա/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ս. Շահումյան փողոց 97/10 հասցեում գտնվող 10-003-0024-0350 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն (վկայական՝ 22052023-10-0021) հանդիսացող հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,01954 հա) հասարակական կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 366 910(երեք հարյուր վաթսունվեց հազար ինը հարյուր տասը) ՀՀ դրամ:

բ/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ա. Մելիքյան փողոց 9 հասցեում գտնվող 10-003-0004-0382 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 18082021-10-0007) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,02872 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 539 280 (հինգ հարյուր երեսունինը հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

գ/ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 25-րդ փողոց, 1-ին փակուղի 8 հասցեում գտնվող 10-022-0203-0018 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 20062023-10-0017) հողամասը (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրության օբյեկտների, մակերեսը՝ 0,42908 հա) գյուղատնտեսական արտադրության գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 934 540 (ինը հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

դ/ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 7-րդ փողոց 36/3 հասցեում գտնվող 10-022-0094-0022 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 20062023-10-0043) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,01541 հա) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 33 563 (երեսուներեք հազար հինգ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ:

ե/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 23/24 հասցեում գտնվող 10-003-0024-0353 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 21062023-10-0024) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,004 հա) հասարակական գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 75 108 (յոթանասունհինգ հազար հարյուրութ) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,14717 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին և 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական

սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշման հավելվածի 2-րդ կետին համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 22.03.2023 թվականի թիվ 01/15/2029-2023 դրական եզրակացությունը.

1. Համաձայնություն տալ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0,14717 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-022-0294-0010) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 10 (տասը) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը» հաստատելու մասին» N 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով.

1. Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող, 0.029 հա մակերեսով, 10-003-0037-0014 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:

2. Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող, 0.0221 հա մակերեսով, 10-003-0010-0012 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով.

1.Ելնելով համայնքի կարիքների համար ընթացիկ և կապիտալ ծախսերի իրականացման անհրաժեշտությունից թույլատրել բյուջետային ծախսերում կատարել 11200000 ՀՀ դրամի չափով նվազեցումներ, որից՝

ա/Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 11 բաժնի 1-ին խմբի 2-րդ դասի տնտեսագիտական դասակարգման 4891 «-Պահուստային միջոցներ» հոդվածի տարեկան գումարը նվազեցնել 11200000 դրամով՝ սահմանելով 10767504 ՀՀ դրամ:

2. Բյուջետային ծախսերում կատարել 11200000 ՀՀ դրամի չափով ավելացումներ, որից՝

ա/Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի 2-րդ խմբի 1-ին դասի տնտեսագիտական դասակարգման 4637 «-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին » հոդվածի տարեկան գումարը ավելացնել 3700000 ՀՀ դրամով՝ սահմանելով՝77200000 ՀՀ դրամ, իսկ 4655 «-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 4500000 ՀՀ դրամով՝ սահմանելով 4500000 ՀՀ դրամ:
բ/Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 09 բաժնի 5-րդ խմբի 1-ին դասի տնտեսագիտական դասակարգման 4637 «-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին » հոդվածի տարեկան գումարը ավելացնել 2700000 ՀՀ դրամով՝ սահմանելով՝25200000 ՀՀ դրամ:

գ/Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժնի 2-րդ խմբի 3-րդ դասի տնտեսագիտական դասակարգման 4637 «-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին » հոդվածի տարեկան գումարը ավելացնել 300000 ՀՀ դրամով՝ սահմանելով՝21800000 ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ն/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով.

1.Բյուջետային եկամուտներում կատարել 22237360 ՀՀ դրամի չափով ավելացումներ, որից՝

ա/Բյուջետային եկամուտների տնտեսագիտական դասակարգման 7451 «-Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 15266130 ՀՀ դրամով՝ սահմանելով 27266130 ՀՀ դրամ:
բ/Բյուջետային եկամուտների տնտեսագիտական դասակարգման 7331 «-Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 6971230 ՀՀ դրամով՝ սահմանելով 8714330 ՀՀ դրամ:

2.Բյուջետային ծախսերում կատարել 22237360 ՀՀ դրամի չափով ավելացումներ, որից՝

ա/Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04-րդ բաժնի 2-րդ խմբի 1-ին դասի տնտեսագիտական դասակարգման 4729 «-Այլ նպաստներ բյուջեից» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 15266130 ՀՀ դրամով՝ սահմանելով 15266130 ՀՀ դրամ:
բ/Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 09-րդ բաժնի 1-ին խմբի 1-ին դասի տնտեսագիտական դասակարգման 4637 «-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 6971230 ՀՀ դրամով՝ սահմանելով 110941230 ՀՀ դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ն/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԱՎՏՈԿԱՅԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԱՌՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

1.Թույլատրել Վայք համայնքի Վայք քաղաքի ավտոկայանի հարակից տարածքում գտնվող, շինարարական աշխատանքներին խոչընդոտ հանդիսացող ընկուզենու հատումը:

2.Սահմանել հատված ծառի վաճառքի գինը 1խմ-ի համար՝ 18.000(տասնութ հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն
ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը՝

1. Վայք համայնքի 2023 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

.Աշխեն Արմենի Գաբրիելյան՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
.Էդիկ Արշալույսի Գևորգյան՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
.Լյովա Հովհաննեսի Ավետիսյան՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
.Հրահատ Կառլենի դանիելյան ՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
.Արշակ Օնիկի Հարությունյան ՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
.Նվեր Ջանիկի Կարապետյան ՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
.Մանուշակ Դավիթի Շահինյան ՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
.Վանուհի Սարգսի Ալեքսանյան ՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
.Հարություն Սամվելի Հակոբյան ՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
.Էդգար Հազարապետի Զաքարյան ՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
.Անուշիկ Արտուշի Հարությունյան ՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹԻՎ 41-Ա ԵՎ 42-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով և 34-րդ հոդվածի 1-ին մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ին ընդունված թիվ 41-Ա և 42-Ա որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները.
1.1 Վայք համայնքի ավագանու թիվ 41-Ա որոշման հղման մեջ գրված «ՀՀ Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան» բառերը փոխարինել «ՀՀ Հողային օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասին, 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685 հոդվածին համապատասխան» բառերով: Նույն որոշման բովանդակության մեջ գրված «անհատույց օգտագործման հատկացնել ՀՀ ՊՆ N զորամասին» բառերից հետո ավելացնել «10(տասը) տարի ժամկետով» բառերը:

1.2 Վայք համայնքի ավագանու թիվ 42-Ա որոշման բովանդակության 1-ին կետում փակագծերում գրված «ուռենի, հացենի, թթենի և տանձենի» բառերի փոխարեն գրել«ուռենի-61 հատ, հացենի-192 հատ, թթենի-34 հատ և տանձենի-2 հատ, ընդամենը՝ 27 խմ» բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:
Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի սեպտեմբերի 12–ին, ժամը՝ 15:30–ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____